ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

«08» 07 2022թ. Երևան № 15-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 17-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Հրամայում եմ

1. Սահմանել Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը՝ համաձայն Հավելվածի 1-ի:

2. Սահմանել ինքնավար պաշտոնների թեկնածուի մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ համաձայն Հավելված 2-ի:

3. Սահմանել ինքնավար պաշտոնների թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը, առավելագույն միավորի

բաշխումը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների՝ համաձայն Հավելված 3-ի:

4. Սահմանել հարցազրույցի փուլի ընթացքում գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները, չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը՝ համաձայն Հավելված 4-ի:

5. Սահմանել Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով թեստավորման անցկացման պայմանները՝ համաձայն Հավելված 5-ի:

6. Սահմանել գնահատման և միավորների հաշվարկման կարգը, անցողիկ միավորները՝ համաձայն Հավելված 6-ի:

7. Սահմանել Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ընտրության մրցույթին հոգեբան ներգրավելու կարգը՝ համաձայն Հավելված 7-ի:

8. Սահմանել Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ընտրության մրցույթին դիտորդ ներգրավելու կարգը՝ համաձայն Հավելված 8-ի:

Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական՝ **Սասուն Խաչատրյան**

Հավելված 1

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի

08. 07. 2022 թ-ի թիվ 15-Լ հրամանի

Կ Ա Ր Գ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ նաև՝ Կոմիտե) ինքնավար թափուր պաշտոնները, բացառությամբ Կոմիտեի նախագահի պաշտոնը, համալրելու նպատակով անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը:

2. «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) հիման վրա, սույն կարգով և իրավական այլ ակտերով նախատեսված պահանջներին համապատասխան՝ Կոմիտեի ինքնավար թափուր պաշտոնները համալրելու համար անցկացվում է մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

3. Կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակը համալրում է մրցութային հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով):

II. ՄՐՑՈՒՅԹԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

4. Կոմիտեի ինքնավար թափուր պաշտոնների համալրման համար մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է Կոմիտեի անձնակազմի կառավարման վարչությունը:

5. Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիներն անձնակազմի կառավարման վարչության համապատասխան աշխատակցին ներկայացնում են Օրենքով նախատեսված պահանջների բավարարումը հավաստող սույն փաստաթղթերը՝

1) մրցույթին մասնակցելու նպատակով հավակնորդի կողմից ստորագրված և մրցութային հանձնաժողովի նախագահին հասցեագրված դիմում.

2) անձը հաստատող փաստաթուղթ և պատճեն.

3) երկու գունավոր լուսանկար՝ 3x4 սմ չափսի.

4) հավակնորդի մշտական բնակության վայրը հաստատող փաստաթուղթ.

5) հավակնորդի՝ Հայաստանի Հանրապետությունում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճանի կամ օտարերկրյա պետությունում ձեռք բերած համապատասխան որակավորման աստիճանի առկայությունը հավաստող փաստաթուղթ, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով, և դրանց պատճենները.

6) պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելը (բացառությամբ իգական սեռի անձանց) կամ նման ծառայությունից օրենքով սահմանված կարգով ու հիմքով ազատված լինելը հավաստող փաստաթուղթը և պատճենը.

7) հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ (ատեստատ, դիպլոմի միջուկ և այլն).

8) ռուսերենից, անգլերենից կամ ֆրանսերենից առնվազն մեկ ստանդարտացված թեստային համակարգով կամ Կառավարության սահմանած այլ կարգով ստուգվող լեզվական գիտելիքների համապատասխան մակարդակի իմացությունը հավաստող փաստաթուղթ: Առաջին կազմի դեպքում նշված փաստաթուղթը չներկայացնելու պարագայում հավակնորդը պարտավոր է այն ներկայացնել նշանակումից հետո՝ երեք տարվա ընթացքում:

9) ինքնակենսագրություն, որը պետք է ներառի տվյալներ դիմողի ծննդյան ամսաթվի, ծննդավայրի, կրթության, աշխատանքային գործունեության, ընտանեկան կարգավիճակի մասին.

10) համապատասխան պաշտոնում նշանակվելու համար «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 16-րդ հոդվածով պահանջվող ստաժի առկայությունը հավաստող փաստաթուղթ.

11) իրավասու մարմինների կողմից տրված փաստաթուղթ՝ դատվածություն չունենալու՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից, ոչ ռեաբիլիտացնող հիմքերով քրեական հետապնդումը դադարեցված կամ իրականացված չլինելու, քրեական հետապնդման բացակայության մասին.

12) Կառավարության հաստատած ցանկով նախատեսված՝ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքում լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդություն կամ ֆիզիկական արատ չունենալը հավաստող փաստաթուղթ (փաստաթղթեր).

13) իրավասու մարմնի կողմից տրված փաստաթուղթ առ այն, որ թեկնածուն, լինելով դատավոր, նախկին դատավոր, դատախազ, նախկին դատախազ, քննիչ, նախկին քննիչ, հետաքննիչ, օպերլիազոր, նախկին հետաքննիչ, նախկին օպերլիազոր, փաստաբան կամ նախկին փաստաբան, վերջին երեք տարվա ընթացքում չի ստացել խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից.

14) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված չլինելը հավաստող փաստաթուղթ.

15) գրավոր հայտարարություն՝ որևէ կուսակցության անդամ չհանդիսանալու մասին.

16) գրավոր հայտարարություն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկված չլինելու մասին.

17) բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը.

18) օրենքով նախատեսված այլ փաստաթղթեր:

6. Թեկնածուն դիմումի մեջ նշում է, թե կոնկրետ որ պաշտոնի համար է մասնակցում մրցույթին, ինչպես նաև կարող է տալ իր համաձայնությունը նույն խմբի մյուս թափուր պաշտոնների մրցույթին մասնակցության վերաբերյալ, որը քննարկվում է հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) թեկնածուն իր դիմած պաշտոնի մրցույթից դուրս է մնացել,

բ) բավարարում է նույն խմբի մյուս պաշտոններին ներկայացվող՝ Օրենքով սահմանված պահանջներին:

7. Թեկնածուն դիմումի մեջ պետք է նշի նաև իր էլեկտրոնային փոստի հասցեն:

8. Անձնակազմի կառավարման վարչության համապատասխան աշխատակիցը մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած յուրաքանչյուր անձի վերաբերյալ փաստաթղթերի փաթեթը ներկայացնում է Հանձնաժողովին:

9. Մրցույթն անցկացվում է հայտարարության մեջ նշված ժամկետում:

10. Առավել բարձր խմբի պաշտոնների մրցույթից դուրս մնացած թեկնածուին Կոմիտեի նախագահը կարող է թույլատրել առավել ցածր խմբի պաշտոնների մրցույթին մասնակցությունը:

III. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

11. Կոմիտեի ինքնավար պաշտոն կարող է զբաղեցնել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը բավարարում է Օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածներով սահմանված պահանջներին:

12. Թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնելու վերաբերյալ հրապարակվում է հայտարարություն մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքէջում (www.azdarar.am) և Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Կոմիտեի պաշտոնական առցանց հարթակներում:

13. Հանձնաժողովը կազմում և Կոմիտեի նախագահի հաստատմանն է ներկայացնում ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հայտարարության ձևը:

Հավելված 2

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի

08. 07. 2022 թ-ի թիվ 15-Լ հրամանի

ՑԱՆԿ

ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ

ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Թեկնածուների մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով անհրաժեշտ փաստաթղթերն են՝

1) Սահմանադրությունը,

2) մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտերը, վերաբերելի նախադեպային որոշումները,

3) քրեական օրենսգիրքը,

4) քրեական դատավարության օրենսգիրքը,

5) քաղաքացիական օրենսգրքի գլուխ 5-ը,

6) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքը,

7) «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքը,

8) «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքը,

9) «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի գլուխ 11-ը, 12.1-ը:

Հավելված 3

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի

08. 07. 2022 թ-ի թիվ 15-Լ հրամանի

ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԻԱՎՈՐԸ, ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԻԱՎՈՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ՝ ԸՍՏ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուներին, բացառությամբ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի, ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն հանրագումարային միավորը սահմանվում է 100-ը (հարյուրը):

2. Կոմիտեի ինքնավար պաշտոնները համալրելու նպատակով թեստավորումն իրականացվում է թեկնածուի մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով կազմված հարցերից բաղկացած թեստավորման հարցարանի (այսուհետ՝ Հարցարան) երեք տարբերակների միջոցով՝ յուրաքանչյուրը կազմված հարյուր հարցից:

3. Թեստավորման փուլի համար առավելագույն միավորը 50-ն (հիսուն) է:

4. Հարցազրույցի փուլի համար առավելագույն միավորը 50-ն (հիսուն) է, որը բաշխվում է ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների՝ հետևյալ համամասնությամբ՝

1) անձնական որակներ՝ 15 միավոր,
2) բարեվարքություն՝ 29 միավոր,
3) պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ աշխատանքային ձեռքբերումներ՝ 6 միավոր:

Հավելված 4

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի

08. 07. 2022 թ-ի թիվ 15-Լ հրամանի

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՀԱՅՏՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԻԱՎՈՐԸ

1. Հարցազրույցի փուլում Կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուին (այսուհետ նաև՝ թեկնածու) ներկայացվող պահանջների գնահատումն իրականացվում է սույն հավելվածով սահմանված չափանիշների շրջանակներում:

2. Կոմիտեի նախագահի տեղակալների, վարչության պետի, վարչության պետի տեղակալի, բաժնի պետի, բաժնի պետի տեղակալի թեկնածուի անձնական որակները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝

1) տվյալ պաշտոնում նշանակվելու նրա շարժառիթն ու ակնկալիքը, ներառյալ՝

ա. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկացվածություն.

բ. վերաբերմունքը կոռուպցիայի, դրա դրսևորումների ու հանրային վտանգավորության նկատմամբ.

2) ղեկավարման և կառավարչական հմտություններ, ներառյալ՝

ա. թիմ ղեկավարելու փորձառություն.

բ. նախաձեռնողականություն.

գ. թիմային աշխատանքի ունակություն.

դ. սեփական զգացմունքները կառավարելու ունակություն ու ինքնատիրապետում.

ե. այլ անձանց և սեփական մասնագիտական կարողությունների ճիշտ գնահատման ու աշխատանքի և պարտականությունների արդար բաժանման կարողություն.

զ. աշխատանքում առաջնահերթությունները սահմանելու կարողություն.

է. անհրաժեշտ իրավիճակներում ինքնուրույն որոշում կայացնելու ունակություն.

3) հաղորդակցման հմտություններ պաշտոնական և ոչ պաշտոնական հարաբերություններում, ներառյալ՝

ա. այլ անձանց ունկնդրելու կարողություն.

բ. նոր միջավայրում արագ ինքնադրսևորվելու ունակություն.

գ. այլ անձանց նկատմամբ հարգալիրություն.

դ. անկաշկանդ շփվելու կարողություն.

ե. միջավայրին արագ հարմարվելու ունակություն.

զ. վստահություն ներշնչելը.

է. զսպվածություն.

4) պատասխանատվության զգացում, ներառյալ՝

ա. ճշտապահություն.

բ. կատարած արարքների հետևանքները կրելու պատրաստակամություն.

գ. սեղմ ժամկետներում աշխատելու կարողություն.

դ. սեփական սխալներն ու թերություններն ընդունելու և դրանց մասին բարձրաձայնելու ունակություն.

ե. հետևողականություն.

զ. սթրեսակայունություն:

3. Հատկապես կարևոր գործերով ավագ քննիչի, հատկապես կարևոր գործերով քննիչի, ավագ քննիչի, քննիչի թեկնածուի անձնական որակները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝

1) տվյալ պաշտոնում նշանակվելու նրա շարժառիթն ու ակնկալիքը, ներառյալ՝

ա. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկացվածություն.

բ. վերաբերմունքը կոռուպցիայի, դրա դրսևորումների ու հանրային վտանգավորության նկատմամբ.

2) աշխատանքի համար անհրաժեշտ կոմպետենցիաներ, ներառյալ՝

ա. նախաձեռնողականություն.

բ. թիմային աշխատանքի ունակություն.

գ. սեփական զգացմունքները կառավարելու ունակություն ու ինքնատիրապետում.

դ. աշխատանքում առաջնահերթությունները սահմանելու կարողություն.

ե. անհրաժեշտ իրավիճակներում ինքնուրույն որոշում կայացնելու ունակություն.

3) հաղորդակցման հմտություններ պաշտոնական և ոչ պաշտոնական հարաբերություններում, ներառյալ՝

ա. այլ անձանց ունկնդրելու կարողություն.

բ. նոր միջավայրում արագ ինքնադրսևորվելու ունակություն.

գ. այլ անձանց նկատմամբ հարգալիրություն.

դ. անկաշկանդ շփվելու կարողություն.

ե. միջավայրին արագ հարմարվելու ունակություն.

զ. վստահություն ներշնչելը.

է. զսպվածություն.

4) պատասխանատվության զգացում, ներառյալ՝

ա. ճշտապահություն.

բ. կատարած արարքների հետևանքները կրելու պատրաստակամություն.

գ. սեղմ ժամկետներում աշխատելու կարողություն.

դ. սեփական սխալներն ու թերություններն ընդունելու և դրանց մասին բարձրաձայնելու ունակություն.

ե. հետևողականություն.

զ. սթրեսակայունություն:

4. Թեկնածուի բարեվարքությունը գնահատվում է հետևյալ չափանիշների հիման վրա՝ հաշվի առնելով նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած բարեվարքության վերաբերյալ եզրակացությունը՝

1) գույքային դրության համապատասխանությունն օրինական եկամուտներին.

2) շահերի բախման առաջացման ռիսկը և շահերի բախման իրավիճակում ճիշտ գործելու կարողություն.

3) նախկինում քրեական կամ կարգապահական կամ վարչական պատասխանատվության ենթարկված չլինելը.

4) էթիկայի կանոններին տիրապետելը.

5) վերաբերմունքը քրեական ենթամշակույթի ու դրա բաղադրիչների նկատմամբ և անօրինականության մասին ազդարարելու պատրաստականություն.

6) զբաղեցրած պաշտոնից դուրս պաշտոնեական դիրքը չօգտագործելը, հեղինակություն և ազդեցություն չկիրառելը.

7) քաղաքական չեզոքություն, քաղաքական և այլ ճնշումներին դիմագրավելու կարողություն ու ցանկություն:

5. Թեկնածուի պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ աշխատանքային ձեռքբերումները գնահատվում են մասնագիտական փորձի և հմտությունների հիման վրա, ներառյալ՝ մասնագիտական փորձառության ընդհանուր ժամկետը և մասնագիտական գործունեության հիմնական ուղղությունները:

6. Սույն հավելվածի 2-րդ և 3-րդ կետերի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը 4 (չորս) է, իսկ նույն կետերի 3-րդ ենթակետերով սահմանված չափանիշինը՝ 3 (երեք):

7. Սույն հավելվածի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված չափանիշի գնահատման առավելագույն միավորը 5 (հինգ) է, 3-րդ ենթակետով սահմանված չափանիշի գնահատման առավելագույն միավորը՝ 3 (երեք), իսկ 4-7-րդ ենթակետերով սահմանված չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը՝ 4 (չորս):

8. Սույն հավելվածի 5-րդ կետով սահմանված չափանիշի գնահատման առավելագույն միավորը 6 է:

Հավելված 5

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի

08. 07. 2022 թ-ի թիվ 15-Լ հրամանի

ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Կոմիտեի ինքնավար պաշտոնները համալրելու նպատակով թեստավորումն անցկացվում է գրավոր:

2. Թեստավորումն անցկացվում է այդ նպատակի համար առանձնացված սենյակում, որն ապահովված է համապատասխան պայմաններով:

3. Մասնակիցը թեստավորմանը մասնակցելու համար ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով: Հանձնաժողովի քարտուղարը ստուգում է մասնակցի ինքնությունը և թույլատրում նրան մուտք գործել թեստավորման անցկացման սենյակ, որտեղ մասնակիցը կարող է զբաղեցնել ցանկացած ազատ տեղ: Մասնակիցների մուտքը սենյակ դադարեցվում է թեստավորումն սկսելուց 10 րոպե առաջ:

4. Հանձնաժողովը, մրցույթի մասնակիցներին ներկայացնելով թեստավորման անցկացման և թեստավորման առաջադրանքների կատարման ընթացակարգերը, թույլատրում է սկսել թեստավորման փուլը:

5. Թեստի լրացման համար մրցույթի մասնակցին տրամադրվում է երեք ժամ 20 րոպե ժամանակ:

6. Թեստավորումն անցկացվում է հավակնորդների համար ծածկագրի կիրառմամբ՝ գաղտնիությունն ապահովելու նպատակով:

7. Թեստավորման փուլի ժամանակ հավակնորդներին արգելվում է իրենց հետ սենյակ ներս բերել և օգտվել տպագիր կամ ձեռագիր նյութերից, տեխնիկայի, հեռահաղորդակցության միջոցներից: Սույն պահանջի խախտման դեպքում խախտում թույլ տված հավակնորդը հեռացվում է քննասենյակից: Հավակնորդին քննասենյակից հեռացնելու մասին կազմվում է արձանագրություն և ստորագրվում է հանձնաժողովի

անդամների կողմից: Խախտում թույլ տված հավակնորդը համարվում է թեստավորման փուլը չհաղթահարած:

8. Թեստավորման ընթացքում հավակնորդներին արգելվում է դուրս գալ քննասենյակից:

9. Թեստավորման առաջադրանքները բաղկացած են 100 հարցից, որոնք ունեն 3 կամ 4 ենթադրյալ ճիշտ պատասխան: Թեստավորման յուրաքանչյուր հարց կարող է ունենալ միայն մեկ ճիշտ պատասխան:

10. Մրցույթի մասնակիցը յուրաքանչյուր հարցի համար ընտրում է պատասխանի մեկ տարբերակ և (վեռձև) V նշում է անում ամփոփաթերթում: Մասնակիցը կարող է ավարտել աշխատանքը մինչև թեստի կատարման համար սահմանված ժամանակի ավարտը:

11. Աշխատանքն ավարտելուց, ինչպես նաև թեստավորման առաջադրանքների կատարման համար հատկացված ժամանակը սպառվելուց հետո հավակնորդը ամփոփաթերթը գցում է կնքված արկղը, իսկ թեստային առաջադրանքի իր օրինակը վերադարձնում է Հանձնաժողովին: Ամփոփաթերթի երկրորդ բնօրինակը տրամադրվում է մրցույթի մասնակցին:

12. Թեստավորման ավարտից անմիջապես հետո հանձնաժողովը հրապարակում է թեստավորման առաջադրանքների ճիշտ պատասխանների ձևանմուշը:

13. Թեստային առաջադրանքների կատարման ընթացքում հարցին պատասխանելիս ջնջումների, մեկից ավելի պատասխանի, մեկից ավելի նշումի առկայության դեպքում նշված ճիշտ պատասխանի համար միավոր չի տրվում:

14. Մրցույթի բոլոր մասնակիցների կողմից ամփոփաթերթը ներկայացնելուց կամ թեստային առաջադրանքները կատարելու համար հատկացված ժամանակն ավարտվելուց անմիջապես հետո Հանձնաժողովն իրականացնում է թեստային առաջադրանքների ստուգում և գնահատում:

15. Թեստավորման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում մրցույթի մասնակիցը կարող է բողոք ներկայացնել թեստավորման արդյունքների մասին հրապարակելուց հետո՝ մեկ օրվա ընթացքում: Այդ նպատակով մրցույթի մասնակցին տրամադրվում է թեստի մեկ օրինակ, որը բողոքը ներկայացվելուց հետո անմիջապես ենթակա է վերադարձման Հանձնաժողովին: Մրցույթի մասնակիցը բողոքը

ներկայացնում է Կոմիտեի նախագահին: Հանձնաժողովի նախագահը անհրաժեշտ նյութերը տրամադրում է Կոմիտեի նախագահին:

16. Մրցույթի մասնակիցը ներկայացվող բողոքում հստակ նշում է թեստավորման վիճարկվող առաջադրանքը կամ առաջադրանքներն ու իր կողմից տրված պատասխանները՝ անհրաժեշտ հիմնավորումներով:

17. Բողոքը և դրա հետ կապված անհրաժեշտ նյութերը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտեի նախագահը քննում է դիմումը և ընդունում թեստավորման արդյունքները փոփոխելու կամ նույնը թողնելու մասին որոշում, բացառիկ դեպքերում բողոքը քննարկելու ժամկետը կարող է երկարաձգվել մինչև երեք օր:

18. Եթե Կոմիտեի նախագահը մասնակցի բողոքը համարում է հիմնավոր, որոշում է բավարարել այն և սխալ է համարում թեստային որևէ առաջադրանք, ապա այդ որոշման հիման վրա տվյալ հարցի համար միավոր չստացած բոլոր մասնակիցների միավորներն ավելացվում են, և կատարվում է թեստավորման արդյունքների վերահաշվարկ:

19. Բողոքարկման դեպքում թեստավորման արդյունքների վերահաշվարկ կատարելու դեպքում նույն օրը հրապարակվում է վերանայված ցանկը:

Հավելված 6

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի

08. 07. 2022 թ-ի թիվ 15-Լ հրամանի

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՆՑՈՂԻԿ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ

1. Կոմիտեի ինքնավար պաշտոնները համալրելու նպատակով անցկացվող թեստավորման հարցարանի յուրաքանչյուր հարցին տրված ճիշտ պատասխանը գնահատվում է 0,5 միավոր:

2. Կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների գնահատման ենթակա հատկանիշները գնահատելու նպատակով հարցազրույցի փուլի ընթացքում մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամին տրվում է հարցաթերթ, որտեղ նշվում են գնահատման ենթակա պահանջները և դրանց բովանդակությունը բացահայտող չափանիշները:

3. Մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ գնահատում է յուրաքանչյուր թեկնածուի՝ նշելով իր նկատառումները գնահատվող չափանիշների վերաբերյալ:

4. Թեկնածուին ներկայացվող պահանջները և դրանց բովանդակությունը բացահայտող չափանիշները գնահատվում են սույն հրամանով սահմանված՝ յուրաքանչյուր պահանջի և չափանիշի համար նախատեսված առավելագույն միավորի շրջանակներում:

5. Մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հարցաթերթիկում նշում է թեկնածուի կողմից իր գնահատման արդյունքում ստացած միավորների հանրագումարը՝ միաժամանակ նշելով գնահատման ենթակա առանձին պահանջների շրջանակներում թեկնածուի ստացած միավորների հանրագումարները:

6. Հարցազրույցի փուլի արդյունքում մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից թեկնածուին տրվող գնահատման առավելագույն միավորը սույն հրամանի հավելված 3-ի 4-րդ կետով սահմանված միավորն է:

7. Թեկնածուի՝ մրցույթի արդյունքում ստացած միավոր է համարվում թեստավորման արդյունքում ստացած միավորի և հարցազրույցի փուլի ընթացքում մրցութային հանձնաժողովի բոլոր անդամների կողմից տրված միավորների թվաբանական միջինի հանրագումարը:

8. Թեստավորման փուլի անցողիկ միավոր է սահմանվում սույն հրամանի հավելված 3-ի 3-րդ կետով սահմանված առավելագույն միավորի 70%-ը (յոթանասուն տոկոս) :

9. Հարցազրույցի փուլի անցողիկ միավոր է սահմանվում սույն հրամանի հավելված 3-ի 4-րդ կետով սահմանված առավելագույն միավորի 70%-ը (յոթանասուն տոկոս), որից առնվազն 22 միավորը բարեվարքության համար:

10. Մրցույթի արդյունքներով կազմվում է մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը, որը ներկայացվում է Կոմիտեի նախագահին: Առանձին կոնկրետ թափուր պաշտոնների համար մրցույթ անցկացնելու դեպքում յուրաքանչյուր պաշտոնի համար ներառվում են միավորների հանրագումարի արդյունքում առավելագույն միավորներ ստացած առնվազն 2 և առավելագույնը 6 թեկնածու (բացառությամբ, եթե մրցույթին մասնակցել է մեկ թեկնածու կամ հարցազրույցի անցողիկ միավորը հաղթահարել է մեկ թեկնածու): Այն դեպքում, երբ մասնակիցների միավորների հավասարության պատճառով հնարավոր չէ որոշել հաղթողին, ապա անցկացվում է բաց քվեարկություն, որի ընթացքում մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ քվեարկում է առավելագույն հավասար ձայներ ստացած այս կամ այն թեկնածուի օգտին: Քվեարկության ժամանակ մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

Հավելված 7

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի

08. 07. 2022 թ-ի թիվ 15-Լ հրամանի

ԿԱՐԳ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՀՈԳԵԲԱՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հարցազրույցի փուլին Հանձնաժողովի կողմից հոգեբան ներգրավելու հետ կապված հարաբերությունները:

2. Հոգեբանը հարցազրույցի փուլի ընթացքում խորհրդատվական եզրակացություն է հայտնում թեկնածուների՝ սույն հրամանի Հավելված 4-ով սահմանված անձնական որակների վերաբերյալ:

3. Մրցույթին հոգեբան ներգրավելու գործընթացն իրականացվում է Հանձնաժողովի կողմից՝ մրցութային կարգով:

4. Հոգեբանի թեկնածություններն առաջադրում են համապատասխան ոլորտում հոգեբանական ծառայություններ մատուցող առնվազն 3 տարվա փորձառություն ունեցող որակավորված հոգեբան մասնագետները և այն մասնագիտական կենտրոնները (այսուհետ՝ հայտատու), որոնք ունեն առնվազն 3 տարվա փորձառություն ունեցող որակավորված հոգեբան մասնագետներ:

II. ՄՐՑՈՒՅԹԻՆ ՀՈԳԵԲԱՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

5. Հանձնաժողովի որոշմամբ Հանձնաժողովի նախագահը Կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկները Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, կարող է ապահովել հարցազրույցին հոգեբան ներգրավելու վերաբերյալ հայտարարության հրապարակումը: Հայտարարությունը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքէջում (www.azdarar.am) կամ Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Կոմիտեի պաշտոնական առցանց հարթակներում:

6. Հայտարարության մեջ պետք է ներառվեն առնվազն հետևյալ տվյալները՝

1) հայտը ներկայացնելու վայրը, հասցեն, հայտն ընդունելու հետ կապված պատասխանատու անձի հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն.

2) հայտի ընդունման օրերը և ժամերը.

3) հայտատուներին ներկայացվող պահանջները և հայտին կից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.

4) հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը:

III. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

7. Հայտատուների կողմից հայտերը ներկայացվում են Կոմիտեին՝ հայտարարությունը հրապարակվելու հաջորդ օրվանից սկսած՝ տասն օրվա ընթացքում:

8. Հայտը և կից ներկայացվող փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթեր) կարող են հանձնվել առձեռն, ուղարկվել փոստով կամ ներկայացվել հայտարարության մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված կամ ստորագրված և սկանավորված եղանակով:

9. Փաստաթղթերն ընդունելու նպատակով Կոմիտեի անձնակազմի կառավարման վարչությունը վարում է համապատասխան գրանցամատյան, որում

նշվում են հայտատուների վերաբերյալ հայտով ներկայացված տեղեկությունները և փաստաթղթերի քանակը:

10. Փոստով կամ էլեկտրոնային փոստով ուղարկված փաստաթղթերը համարվում են ժամկետում ներկայացված, եթե դրանք հանձնվել են փոստային առաքման կամ ուղարկվել են հայտարարության մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին՝ մինչև սույն կարգով սահմանված հայտերի ընդունման համար նշված ժամկետի ավարտման օրը ժամը 24:00-ն:

IV. ՀՈԳԵԲԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

11. Մրցույթին որպես հոգեբան կարող է ընդգրկվել այն անձը, որն ունի առնվազն երեք տարվա հոգեբանի մասնագիտական աշխատանքային փորձառություն:

12. Մրցութային հանձնաժողովի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են ներգրավվել մինչև երկու հոգեբան:

13. Յուրաքանչյուր հայտատու կազմակերպություն կարող է ներկայացնել մեկ հոգեբանի թեկնածություն: Հոգեբան մասնագետներն իրենց թեկնածությունը կարող են ներկայացնել նաև անձամբ:

14. Հայտատուները պետք է ներկայացնեն՝

1) հայտ՝ ուղղված Հանձնաժողովի նախագահին՝ ըստ Ձև 1-ի կամ Ձև 2-ի.

2) հայտատուի՝ հոգեբանության ոլորտում փորձառությունը հավաստող փաստաթղթերը.

3) հայտը մասնագիտական կենտրոնի կողմից ներկայացնելու դեպքում՝ հայտը ներկայացնող անձի՝ հայտատուի կողմից լիազորված անձ լինելու փաստը հաստատող փաստաթուղթ.

4) հոգեբանի թեկնածուի ինքնակենսագրությունը (այդ թվում՝ մասնագիտական գործունեության նկարագրությամբ)՝ կցելով առնվազն երեք տարվա հոգեբանի մասնագիտական աշխատանքային փորձառությունը հավաստող փաստաթղթեր (այդ թվում՝ գործատուի կողմից տրամադրված տեղեկանք).

5) հայտարարություն հոգեբանի թեկնածուի՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված որևէ կուսակցության անդամ չհանդիսանալու մասին՝ ըստ Ձև 3-ի:

15. Հայտատուի ներգրավման նպատակով Հանձնաժողովի կողմից ստուգվում են ներկայացված փաստաթղթերի ամբողջականությունը և համապատասխանությունը սույն կարգի պահանջներին:

16. Սույն կարգի պահանջներին չբավարարող հայտ ներկայացնելու դեպքում հայտ ներկայացնողը դրա մասին պատշաճ ձևով ծանուցվում է երեք աշխատանքային օրվա ընթացքում (հեռախոսով, էլեկտրոնային փոստով կամ գրավոր՝ փոստի միջոցով) և նրան տրամադրվում է երկու աշխատանքային օր՝ թերությունները շտկելու համար:

17. Սահմանված ժամկետում թերությունները չշտկելու դեպքում ներկայացրած հայտին ընթացք չի տրվում՝ այդ որոշման մասին 1-օրյա ժամկետում ծանուցելով հայտատուին:

18. Եթե սույն կարգով սահմանված չափանիշներին համապատասխանում է երկու հոգեբան, ապա վերջիններս սահմանված չափանիշներին համապատասխանելու դեպքում փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո համարվում են ընտրված: Եթե սահմանված չափանիշներին համապատասխանում են երկուսից ավելի թեկնածուներ, ապա նախապատվությունը տրվում է առավել մեծ փորձառություն (առավել երկար գործունեություն) ունեցող թեկնածուին:

19. Արդյունքներն ամփոփելուց հետո մեկօրյա ժամկետում արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում է Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Կոմիտեի պաշտոնական առցանց հարթակներում և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային www.azdarar.am կայքէջում:

Հավելված 8

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի

08. 07. 2022 թ-ի թիվ 15-Լ հրամանի

Կ Ա Ր Գ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ԴԻՏՈՐԴ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Կոմիտեի ինքնավար թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի թեստավորման և հարցազրույցի փուլերին Հանձնաժողովի կողմից դիտորդ ներգրավելու հետ կապված հարաբերությունները:

2. Կոմիտեի ինքնավար թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթին դիտորդ ներգրավելու գործընթացն իրականացվում է Հանձնաժողովի կողմից՝ մրցութային կարգով:

3. Դիտորդի թեկնածություններ կարող են առաջադրել այն հասարակական կազմակերպությունները (այսուհետ՝ հայտատու), որոնք ունեն հակակոռուպցիոն ոլորտում գործունեության երեք տարվա փորձառություն:

II. ՄՐՑՈՒՅԹԻՆ ԴԻՏՈՐԴ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

4. Հանձնաժողովի նախագահը Կոմիտեի ինքնավար թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնելու վերաբերյալ հայտարարության հրապարակման հետ միաժամանակ ապահովում է մրցույթին դիտորդ ներգրավելու վերաբերյալ հայտարարության հրապարակումը: Հայտարարությունը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական

ինտերնետային կայքէջում (www.azdarar.am) կամ Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Կոմիտեի պաշտոնական առցանց հարթակներում:

5. Հայտարարության մեջ պետք է ներառվեն առնվազն հետևյալ տվյալները՝

1) հայտերը ներկայացնելու վայրը, հասցեն, հայտն ընդունելու հետ կապված պատասխանատու անձի հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն.

2) հայտերի ընդունման օրերը և ժամերը.

3) հայտատուներին ներկայացվող պահանջները և հայտին կից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.

4) հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը:

III. ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

6. Հայտատուների կողմից հայտերը ներկայացվում են Կոմիտեին՝ հայտարարությունը հրապարակվելու հաջորդ օրվանից սկսած՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում:

7. Հայտը և կից ներկայացվող փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթեր) կարող են հանձնվել առձեռն, ուղարկվել փոստով կամ ներկայացվել հայտարարության մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված եղանակով:

8. Փաստաթղթերն ընդունելու նպատակով Կոմիտեում վարվում է համապատասխան գրանցամատյան, որում նշվում են հայտատուների վերաբերյալ հայտով ներկայացված տեղեկությունները և փաստաթղթերի քանակը:

9. Փոստով կամ էլեկտրոնային փոստով ուղարկված փաստաթղթերը համարվում են ժամկետում ներկայացված, եթե դրանք հանձնվել են փոստային առաքման կամ ուղարկվել են հայտարարության մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին՝ մինչև սույն կարգով սահմանված հայտերի ընդունման համար նշված ժամկետի ավարտման օրը ժամը 24:00-ն:

IV. ԴԻՏՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

10. Մրցույթին որպես դիտորդ կարող է մասնակցել այն անձը, որն ունի հակակոռուպցիոն ոլորտում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն:

11. Մրցութային հանձնաժողովի աշխատանքներին կարող են ներգրավվել մինչև երեք դիտորդ:

12. Յուրաքանչյուր հայտատու կարող է ներկայացնել մեկ դիտորդի (այսուհետ նաև՝ թեկնածու կամ դիտորդի թեկնածու) թեկնածություն:

13. Հայտատուները պետք է ներկայացնեն՝

1) հայտ՝ ուղղված Հանձնաժողովի նախագահին՝ ըստ Ձև 4-ի.

2) հասարակական կազմակերպության անունից հայտը ներկայացնող անձի՝ հասարակական կազմակերպության լիազորված անձ լինելու փաստը հաստատող փաստաթուղթ.

3) հասարակական կազմակերպության՝ հակակոռուպցիոն ոլորտում փորձառությունը հավաստող փաստաթղթերը (հակակոռուպցիոն ոլորտում իրականացված ծրագրերը կամ միջոցառումները, դրանց բովանդակությունը, իրականացման ժամանակահատվածը, ստացված արդյունքները).

4) դիտորդի թեկնածուի ինքնակենսագրություն (այդ թվում՝ մասնագիտական գործունեության նկարագրությամբ)՝ կցելով հակակոռուպցիոն ոլորտում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային փորձառությունը հավաստող փաստաթղթեր (այդ թվում՝ առկայության դեպքում՝ գործատուի կողմից տրամադրված տեղեկանք).

5) հայտարարություն՝ դիտորդի՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված որևէ կուսակցության անդամ չհանդիսանալու մասին՝ ըստ Ձև 5-ի:

14. Դիտորդի ներգրավման նպատակով Հանձնաժողովի կողմից ստուգվում են ներկայացված փաստաթղթերի ամբողջականությունը և համապատասխանությունը սույն կարգի պահանջներին:

15. Սույն կարգի պահանջներին չբավարարող հայտ ներկայացնելու դեպքում հայտ ներկայացնողը դրա մասին պատշաճ ձևով ծանուցվում է երեք աշխատանքային օրվա ընթացքում (հեռախոսով, էլեկտրոնային փոստով կամ գրավոր) և նրան տրամադրվում է երկու աշխատանքային օր թերությունները շտկելու համար:

16. Սահմանված ժամկետում թերությունները չշտկելու դեպքում ներկայացված հայտին ընթացք չի տրվում՝ այդ մասին հայտատուին ծանուցելով մեկօրյա ժամկետում:

17. Եթե սույն կարգով սահմանված չափանիշներին համապատասխանում է երեք թեկնածու, ապա վերջիններս փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո համարվում են ընտրված: Եթե սահմանված չափանիշներին համապատասխանում են երեքից ավելի թեկնածուներ, ապա նախապատվությունը տրվում է հակակոռուպցիոն ոլորտում առավել մեծ փորձառություն (առավել երկար գործունեություն) ունեցող թեկնածուներին:

18. Արդյունքներն ամփոփելուց հետո մեկօրյա ժամկետում մրցույթի արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում է Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Կոմիտեի պաշտոնական առցանց հարթակներում կամ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային www.azdarar.am կայքէջում:

ՁԵ N 1

ՀԱՅՏ

Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ընտրության մրցույթին հոգեբան ներգրավելու համար հայտարարված մրցույթի մասնակցության

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թեկնածուների ընտրության մրցութային հանձնաժողովի նախագահ՝ _____-ին

1.	Կազմակերպության անվանումը, հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն	
2.	Գրանցման համարը, ՀՎՀՀ	
3.	Կազմակերպության կոնտակտային անձի անունը, ազգանունը	
4.	Պաշտոնը	
5.	Հասցե, հեռախոս, էլ. փոստ	
6.	Հոգեբանի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն	
7.	Կից ներկայացվող փաստաթղթերը (էջերի քանակը՝)	

_____
(ստորագրություն)

_____
(օր, ամիս, տարեթիվ)

Ձև N 2

ՀԱՅՏ

Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ընտրության մրցույթին հոգեբան ներգրավելու համար հայտարարված մրցույթի մասնակցության

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թեկնածուների ընտրության մրցութային հանձնաժողովի նախագահ՝ _____-ին

1.	Հայտատուի անունը, ազգանունը	
2.	Մշտական բնակության վայրը	
3.	Հեռախոսահամարը	
4.	Էլ. փոստի հասցեն	
5.	Կից ներկայացվող փաստաթղթերը (էջերի քանակը՝)	

_____
(ստորագրություն)

_____
(օր, ամիս, տարեթիվ)

ՁԵՎ N 3

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ _____, սույնով հայտարարում եմ,
(անուն, ազգանուն)

որ որևէ քաղաքական կուսակցության անդամ չեմ հանդիսանում և չեմ զբաղվում քաղաքական գործունեությամբ:

_____
(ստորագրություն)

_____
(անուն, ազգանուն)

_____
(օր, ամիս, տարեթիվ)

Ձև 4

ՀԱՅՏ

Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ընտրության մրցույթին դիտորդ ներգրավելու համար հայտարարված մրցույթի մասնակցության

1.	Կազմակերպության անվանումը, հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն	
2.	Գրանցման համարը, ՀՎՀՀ	
3.	Կազմակերպության կոնտակտային անձի անունը, ազգանունը	
4.	Հայտը լրացնող անձի պաշտոնը	
5.	Հասցե, հեռախոս, էլ. փոստ	
6.	Դիտորդի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն	
7.	Կից ներկայացվող փաստաթղթերը (էջերի քանակը՝)	

_____
(ստորագրություն)

_____
(օր, ամիս, տարեթիվ)

ՁԵՎ N 5

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ _____, սույնով հայտարարում եմ,
(անուն, ազգանուն)

որ որևէ քաղաքական կուսակցության անդամ չեմ հանդիսանում և չեմ զբաղվում քաղաքական գործունեությամբ:

_____
(ստորագրություն)

_____
(անուն, ազգանուն)

_____
(օր, ամիս, տարեթիվ)